

յում և Հնդկաստանում: Անկասկած Սենուսին սպասում է մնայն յաջող ընդհանուր վարդապետութեան յաղթանակի համար:

Իրերի այսպիսի գրութիւնը համեմատութեան գործը, առնուազն, շատ է գիտարեցնում:



ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԵԱՆ ՔԱՐՈՉԻՉՆԵՐԻ ԴԵՐԸ,  
ԶԻՆԱԿԱՆ ՅՈՒՉՈՒՄՆԵՐԻ ՄԷՉ:

Չինաստանում վերջին ամիսներս տեղի ունեցած մեծ յուզումները, որոնք ուրիշ են հանել ամբողջ քաղաքակրթութեան աշխարհը և ընդհանուրի հետաքրքրութեան կենդրոն դարձրել՝ իրերի բնական բերմամբ պատճառեղան շարժելու ի միջի այլոց այն հարցը, թե՛ ինչ չափով արդեօք այդ յուզումների շարժառիթ կարելի է համարել քրիստոնէութեան քարոզութիւնը և ո՞ր դաւանութեան կամ ո՞ր ազգի պատկանող միսիոնարների վերայ աւելի ծանր պատասխանատուութիւն է ընկնում: Առանձին ուշադրութեան և տաք բանական առարկայ եղաւ այս նկատմամբ անգլիական նախարարապետ Լորդ Սալեսբորիի ձառը, որ նա խօսեց «Արտասահմանում» աւետարան տարածելու ընկերութեան» երկհարիւրամեայ յորելեանի առթիւ: «Հին ժամանակի եկեղեցւոյ մէջ, ասում էր նա, մեծ աւետարանիչներ քարոզութեան էին կոչում սոսկալի վտանգների դէմ գնալով և տանում էին այն բոլոր սարսափները, որ նոցա վերայ թափել կարող էր աշխարհը՝ ի պաշտպանութիւն իրենց քարոզած վարդապետութեան և ուսուցած բարոյականութեան: ... Երբ միջին դարերում Բոնիֆատիոս կամ Կոլումբանի \* պէս մի միսիոնար քարոզում էր՝ ամէն դժուարութիւն իւր վրայ էր ընդունում, յանձն էր առնում մարտիրոսական մահ, տանում էր արիարար այն տանջանքները, որոնց ենթարկում էին իրեն, և նորա անձնութեան ամբողջ բարոյական և հոգեոր տպաւորու-

թիւնը անարդել կերպով ներգործում էր շրջապատողների վերայ: Բայց եթէ այսօր այդպիսի մի Բոնիֆատիոս կամ Կոլումբան մարտիրոսութեան ենթակայ լինի՝ անմիջապէս կղիմեն հիւպատոսին և շուտով մի դրահակիր նաւ կգայ. — դժբաղդարար այդ դրութիւնը փոխել էլ կարելի չէ: Թէպէտ ոչ ոքի համար պահարակելու բան չկայ այստեղ, թէպէտ ամէնից քիչ մեր միսիոնարներին կարելի է սորա համար պահարակել, թէպէտ ես թոյլ չեմ կարող տալ, որ աշխարհական իշխանութիւնը մեղադրելի համարուի, որ իւր հպատակների կողմից վրէժխնդիր է հանդիսանում սակայն և այնպէս այդ հանգամանքը քրիստոնէական ուսման զուտ հոգեւոր վարկն ու ներգործութիւնը շատ է պակասեցնում: Մարդոց համար մի առիթ է սա և փորձութիւն՝ քրիստոնէական ուսման մի որոշ նշանակութիւն տալու և այնպիսի բաներ կասկածելու, որոնք շատ հեռու են նորա քարոզների մտքից: ... Աչքի առաջ ունեցէք ահա Չինաստանը՝ նկատեցիք, որ բոլոր սպանուածները քրիստոնէայ են: Երեւակայում էք արդեօք, թէ նոքա այն պատճառաւ են սպանուած, որ չինացիք տուում են նոցա կրօնը: Սակայն ո՞չ մի ժողովուրդ երկրիս վերայ այնչափ անտարբեր չէ կրօնական խնդիրներում որչափ չինացիք: Ինչ որ տեղիք է ունեցել պատճառն այն է, որ նոքա ինչպէս և ուրիշ ազգեր, այն դադափարն են կազմել, թէ միսիոնարի գործը լոկ գործիք է միայն աշխարհական իշխանութեան ձեռքում: սորա աչքի առաջ ունեցած նպատակներին հասցնելու համար: — Ոչ ոք այնչափ զերծ չէ կողմնակի նպատակներից, որչափ այս ափից հեռացող միսիոնարները: Սակայն այդ իրողութիւնը չէ պակասեցնում այն իրական վտանգը, որ նոցա դէմ եղած կասկածից յառաջ է դալիս և որի հետեանքը այնպէս արիւնալի պատկերով ահանում էք ներկայ վայրկեանին, երբ խօսում եմ ձեզ հետ: Թոյլ կտամ խրատական կողմի վերայ մասնացոյց անեմ, զգուշութիւն և խոհեմութիւն՝ անձնութեան և ոգեւորութեան պատշաճաւոր սահմաններում — պէտք է համարուեն միսիոնարների պարտականութիւնը օտար երկրի մէջ, որոնք միայն աւետարա-

\* Գեմանիոյ եւ Զուիցերիոյ առաջնախնդր:

ներ չեն քարոզում: այլ նաև բնիկների աչքում ներկայացնում են այն աղքերի բնաւորութիւնն ու նպատակները, որոնց միջից իրենք ելեր են: Աւստի մեծ պարտականութիւն կայ նոցա վերայ իրենց ոգևորութիւնը քրիստոնէական խոհմութեամբ սանձած պահել: ... Այսօր իւրաքանչիւր որ, որին չափազանց եռանդը մինչև մարտիրոսութեան է տանում: վտանգի է ենթարկում առնուադն նոցա կեանքը, որոնց քարոզել է, որ գուցէ աւելի վատ է պատճառ է դառնում թափել տալու իւր սեփական հայրենակիցների արիւնը, այն զինուորների և ծովագնացների արիւնը, որոնք նոցա պէտք է պաշտպանեն և ստիպուած են յօգուտ իրենց հայրենակիցների թշնամական և պատերազմական գործողութիւններ սկսել, որպէսզի թող չտան այդպիսի անկարգութիւններ կրկնելու: ... (Ներկայումս քրիստոնէայ քարոզիչները) հակադասական չափով սոսկալի դէպքեր յառաջ կոչելու վտանգի մէջ են: Այնուհետև նոյն նախադրուշացումները յատկապէս մահմետականների մէջ գործող միսիոնարներին ուղղելով՝ Սալիսբըրին վերջացնում է իւր խօսքը մի շատ լուրջ յորդորով՝ խոյս տալ քրիստոնէական կրօնը բռնի ուժի պաշտպանութեան ներքոյ դնելու ամենափոքր երևութից:

Անուանի քաղաքագէտի այս զգուշաւոր խօսքերը հիմք առնելով մի քանի մեծ օրաթերթերի այնչափ յառաջ են գնում, որ չինական խռովութիւնների էական պատճառը, ուղղակի միսիոնարներին են համարում և պահանջում են, որ պետութիւնները ստիպեն նոցա ելնել երկրի խորքերից և «թողնել հեթանոսներին իրենց համար երանաւէտ հեթանոսութեան մէջ»: Քարոզչական շրջաններին մօտիկ մարդիկ շտապեցին բնականաբար ամենայն վճռականութեամբ և զայրոյթով հերքել այդ ծանր մեղադրանքը, բողոքականներն աշխատում են ապացուցանել, որ եթէ քաղաքականութեան մէջ խառնուել և պետութիւնների միջամտութիւնը հրաւիրել են՝ կաթոլիկ միսիոնարներն են եղել, իրենք սկզբունքով և գործնականապէս հեռու են բոլորովին քաղաքականութիւնից: Այսպէս երբ 1895 թ. ին 2 ինաստանում 11 անգ-

լիացի քարոզչութիւններ սպանուեցան անգլիական եկեղեցական միսիոնի աչքի բնկնող ներկայացուցիչներից մէկը պետութեան կողմից ամէն օգնութիւն մերժելով ստում է, «թող անգլիական կառավարութիւնը Պեկինի պալատում ճնշում գործ դնէ չարագործներին պատժելու, եթէ կամենում է, այդ իւր գործն է, իւր կնքած դաշնագրութիւնները դորա համար իրաւունք են տալիս: Սակայն ամէնքը թող հասկանան, որ մենք միսիոնի մարդիկս ոչինչ այդպիսի բան չենք ցանկանում: Մեր եղբայրները, որոնք Քրիստոսի սիրուց մղուած մինչև աշխարհի ծայրերն են գնում, շատ լաւ գիտեն, թէ ինչ վտանգներ են իրենց սպասում, նոցա զխաւորներն առաջուց ասում են այդ իրենց և նոցա կամքին են թողնում, թէ ինչպէս կ'արուեն նեղութեան ժամին՝ կիսալէն արդեօք թէ կ'մնան: Նոյն սկզբունքն աւելի որոշ կերպով արտայայտում է 2 ինաստանի ներքին միսիոնի» հիմնական կանոններից մէկը. «Միսիոնարը կարող է սեփական կամ չինական կառավարութեան ընծայած բոլոր իրաւունքներից օգտուել, բայց պէտք է երբեք օգնութիւն կամ պաշտպանութիւն չպահանջէ, թէպէտ հանգամանքներ կ'լինեն, երբ նա ստիպուած է խնդրել այն իրեն շնորհ: Գանդամներ հիւստոսներին կամ չինական աստիճանաւորներին ուղղուած, չարագործներին պատժելու, իրական կամ կործեցեալ իրաւունք պաշտպանելու և կրած վնասների հատուցումն զբոնելու համար՝ լաւ է ամենեւին չլինի: Այն դէպքում, երբ յուզում և հալածանք է տեղի ունենում երկրի ներքոյ կարելի է զիմել տեղական չինացի աստիճանաւորներին աղդարարութիւններով, իսկ եթէ դժբա չեն օգնի, զրկեալները պէտք է Աստուծոյ ձեռքը յանձնեն իրենց դատը: Այ մի զիպուածում միսիոնարը իրաւունք չունի պատասխանատուութիւնը սեփական անձի վերայ առնելով քրիստոնական կամ ուրիշ որ և է եւրոպական կառավարութեան գանդատ ուղղել: Նոյն ընկերութիւնը հաստատում է, որ 35 տարուայ մէջ 135 կայաններ են հաստատուել չինական տասը նահանգներում և բոլոր այս գործունէութեան շրջանում, ինչ-

դանիայէն Նաւէրի անմիջական ազդեցութիւնից հետեւ գանուելով հանգերձ միախնարաներից մէկը մինչև իսկ բռնամահ է եղել ժողովրդի ձեռքով: «Ընդհակառակն որովհետև միախնարանները երբեք չէին աշխատում բռնի կերպով մուտք գործել որ և է տեղ՝ նոցա յաջողուեցաւ ամենուրեք բարեկամներ գտնել և մինչ նոքա իրրեւ աւետարանի քարոզիչներ իրենց գործն էին յառաջ տանում՝ չինացիք վարժուեցին, որ օտարները բնակութիւն հաստատեն իրենց մէջ: Այդպիսով բարբարոս օտար երկրացիներից ունեցած երկխաղն ըստ մեծի մասին չբացաւ:»

Թէ ինչպէս տարբեր է կաթոլիկներին և բողոքականներին հայեցակիան այս խնդրում, աչքի ընկնող սպացոյց համարւում է նոցա վերաբերումը դէպի գերմանական կայսեր արտասանած ծառայ որ նա ուղղեց նաւահանգրստում դէպի Չինաստան գնացող զօրքերին: Զորդորելով իւր զինուորներին ոչ մի թշնամու չինացի և այնպիսի վրէժ հանել սպանուած գետպանի համար, որ չինացիները զարէ ի դար չմոռանան և երկխաղածութեամբ յիշեն գերմանացիների անուէր՝ կայսրն ասաց ի միջի այլոց. «Մենք մտածում ենք նաև մի աւելի բարձր բանի վերայ՝ մեր կրօնի և դրսում գտնուող եղբայրների պաշտպանութեան վերայ, որոնցից շատերը իրենց կեանքը դրել են յանուն Փրկչի»: Չինաստանի կաթոլիկական միախնար գեկավար Անպէտ եպիսկոպոսը որի բողոքը գլխաւոր առիթն եղաւ անցեալ տարի չինական մի շարք նաւահանգիստների գրաւման նախ Վերմանիայի ապա նաև եւրոպական ուրիշ պետութիւնների կողմից՝ շտապեց հեռագրով իւր սրտագին գոհունակութիւնը և խորին շնորհակալութիւնը յայտնել կայսեր և պապը Ապոլ արքեպիսկոպոսի միջոցաւ շնորհաւորեց նորա այսպիսի եռանդազին ձեռնարկութիւնը, մինչդեռ բողոքականները շատ պաղ մնացին և ոմանք չքաշուեցան նաև հրապարակաւ արտայայտելու իրենց ցաւն ու դժգոհութիւնը, որ կայսրը աւետարանի քարոզութիւնը քաղաքականութեան հետ էր խառնում և հաղաբաւոր մարդոց կոտորածը այդ եղանակով արդարացնում: Այնուամենայնիւ գտնուե-

ցան նոյն իսկ շատ բարձր դիրքի մարդիկ, որ ոչ միայն բողոքական միախնարաններին ազատ չեն համարում պատասխանատուութիւնից այլ և նոցա վերայ աւելի ծանր մեղք են ձգում: Այսպէս Չինաստանի նախկին գերմանական դեսպան Բրանդտ թուելով չինացւոց օտարատեսութեան պատճառները, առաջին տեղը դնում է քրիստոնեայ մահաւանդ Բողոքական միախնարանների ճշնող գործունէութիւնը, ընդունելով որ զգալի է սոցա մօտ իրենց կաթոլիկ պաշտօնակիցների կարգապահութեան և լրջախոհութեան պակասութիւնը: Christliche Welt թերթի խմբագիրը հրաւիրեց նորան մի յոդուածով հաստատել այդ ծանր մեղադրանքը և նա շտապեց ուղարկել խմբագրին ուղղուած մի նամակ, որի մէջ ուշադրութեան արժանի է այն կէտը, թէ ինչպէս յաճախ միախնարանները մնասում են իրենց հեղինակութեան և կրօնի վարկը ձգում, կաթոլիկ և բողոքական իրար հակառակ գործելով, մանաւանդ պաշտօնական հանգիստնալով լոկ նիւթական անկալութեամբ իրենց ապաւինած կառնածեղի բարքի տէր, ժողովրդի ամենայնեւալ դասը կազմող մարդոց:—Շման հայեացքներ է պարզում նաև խռովութիւնների միջոցին սպանուած գերմանական վերջին գետպան Աետտելրի մի անգլիացի թղթակցի հետ ունեցած խօսակցութիւնը, որ այդ անգլիացին հրատարակել է գետպանի մահից յետոյ:—Սակայն մինչ այստեղ բանակուիւր շարունակուում է հետեւ Չինաստանից նորանոր տեղեկութիւններ են հասնում այն սարսափելի կոտորածների մասին, որոնց ենթակայ են եղել երբեմն ահագին խմբերով, միախնարաններն ու քրիստոնէութիւն ընդունած չինացիները, սառսրուեցուցիչ բաներ են պատմում այն անտանելի տանջանքների մասին, որ նոցանից շատերը կրել են մահից առաջ: Ինչի համար որպիսի անկալութեամբ—պէտք է հարցնենք ականաց, միթէ ծանաչած Ճշմարտութիւնը իրենց նմաններին հաղորդելու տեսչը չէ եղել նոցա մեծ մասի դէպի մահուան գիրկը մղողը և մեծ անիրաւութիւն չէ արդեօք, փախուկ տեղը նստած, առանց գործին ի մօտոյ ծանօթ լինելու արատ ձգել նոցա արիւնաներկ յիշատակի վերայ: